Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թ.
հունվարի 12-ի նիստի N 1
արձանագրային որոշման

# ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ
# ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

## I. Ներածություն

1. Սոցիալական պաշտպանության քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս առանձնակի կարևորություն են ձեռք բերում բնակչության սոցիալապես խոցելի խմբերի, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների ուսումնասիրությունն ու դրանց լուծման ուղիների որոնումները: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունն ու սոցիալական ներառումը կարևորագույն նախապայման է կայուն, ներդաշնակ, ապահով և անխտրական հասարակության զարգացման համար:

2. Համաձայն 2010 թվականի գլոբալ մարդահամարի տվյալների՝ աշխարհի բնակչության շուրջ 15 տոկոսը կամ մոտ 1 մլրդ մարդ ունի հաշմանդամության որևէ տեսակ: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) տվյալների 1970-ական թվականներին այս ցուցանիշը կազմել է շուրջ 10 տոկոս: Հաշմանդամություն ունեցող անձանց թվի աճը պայմանավորող հիմնական գործոններից են շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակը, խրոնիկ հիվանդությունների՝ շաքարային դիաբետի, սիրտ-անոթային հիվանդությունների և հոգեկան առողջության խնդիրների գլոբալ աճը, բնակչության ծերացումը, շարունակվող պատերազմները և այլն:

3. Որպես հետխորհրդային շրջանի պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը ժառանգել էր հաշմանդամության բժշկական մոդելը, ըստ որի հաշմանդամությունը համարվում է «հիվանդություն», իսկ հաշմանդամություն ունեցող անձի կյանքի բարելավմանն ուղղված գործողությունները կրում են հիմնականում բժշկական և բարեգործական բնույթ: Հաշմանդամության բժշկական մոդելին հատուկ է այն մոտեցումը, ըստ որի հաշմանդամություն ունեցող անձը դիտարկվում է որպես հիվանդ, խնամյալ, ով ունի խնամքի և հոգածության կարիք, նրա կյանքը կախված է այլոց վերաբերմունքից, ինչն էլ հանգեցնում է նրա սոցիալական մեկուսացմանը և խոչընդոտում նրա լիարժեք մասնակցությանը հասարակական կյանքին: ՀՀ կառավարությունը 1998 թվականի նոյեմբերի 3-ին N 684 որոշմամբ ընդունեց «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կանոնադրությունը և անձի հաշմանդամ ճանաչելու կարգը, որով ներդրվեց բժշկասոցիալական փորձաքննությունը և հաշմանդամության սահմանման սոցիալական մոդելի տարրերը, ըստ որի հաշմանդամությունը համարվում է հիվանդություններով, վնասվածքներով կամ արատներով պայմանավորված օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումների

հետևանքով առաջացած սոցիալական անբավարարություն, որը հանգեցնում է անձի կենսագործունեության սահմանափակման:

4. 2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Միավորված ազգերի կազմակերպության «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա): Այն մարդու իրավունքների մասին միջազգային, իրավաբանորեն պարտավորեցնող պայմանագիր է, որը նպատակաուղղված է հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանությանը, ներառյալ՝ խտրականության բոլոր տեսակներից՝ բռնությունից և խոշտանգումներից պաշտպանության իրավունքը, համայնքում անկախ ապրելու իրավունքը, կրթության, տրանսպորտային և այլ հանրային ծառայությունների հասանելիության իրավունքը, տեղեկատվության և հաղորդակցության հասանելիության իրավունքը, զբաղվածության և պատշաճ կենսամակարդակի իրավունքը, սոցիալական արդարության հասանելիության իրավունքը: Կոնվենցիայի վավերացմամբ պետությունը պարտավորվել է նախաձեռնել այնպիսի օրենսդրական փոփոխություններ և իրականացնել այնպիսի պետական քաղաքականություն, որը կհամապատասխանի Կոնվենցիայի դրույթներին:

5. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները և միջազգային լավագույն փորձը՝ հաշմանդամության ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության իրականացման հիմքում դրվել է հաշմանդամության սոցիալական մոդելը, որը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա և կոչ է անում հավասար պայմանների ստեղծման և հավասար հնարավորությունների ապահովման միջոցով հասնել բոլոր քաղաքացիների լիարժեք մասնակցությանը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Ավելին, սոցիալական մոդելը շեշտը դնում է երկրի զարգացման բոլոր գործընթացներին հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակցության վրա: Այս մոտեցմամբ պարտադիր է դառնում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցային գործընթացի ապահովումը:

6. Ակնհայտ է, որ հաշմանդամության այս մոդելի ներդրումը միայն պետական մարմինների ուժերով հնարավոր չէ իրականացնել: Ոլորտում իրականացվող քաղաքականության և ծրագրերի նախորդ տարիների ձեռքբերումների կայուն, շարունակական զարգացման ու նախատեսվող համարձակ և իրատեսական բարեփոխումների իրականացման միակ գրավականը պետական կառավարման համակարգի և ոլորտի շահագրգիռ այլ դերակատարների, մասնավորապես հասարակական կազմակերպությունների միասնական ու փոխհամաձայնեցված աշխատանքն է:

7. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագիրը (այսուհետ՝ համալիր ծրագիր) միասնական, նպատակաուղղված և համակարգված քաղաքականության կարևորագույն փաստաթուղթ է: Այն դառնալու է ոլորտում առաջիկա տարիների սոցիալական ներառման քաղաքականության իրականացման ուղեցույցը՝ նպաստելով

հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու լիարժեք սոցիալական ներառմանը:

## II. Համալիր ծրագրի նպատակը և խնդիրները

8. Համալիր ծրագրի նպատակն է՝ ամրագրել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված հիմնական ուղղությունները, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովող համապարփակ միջոցառումների ցանկը, սահմանել դրանց կատարման համար պատասխանատու մարմինները, կատարման ժամկետները, ֆինանսավորման աղբյուրները, թիրախներն ու արդյունքները առաջիկա հինգ տարիների համար:

9. **Հաշմանդամության ոլորտի խնդիրներն են՝**

1) Ապահովել բոլոր ոլորտներում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխան օրենսդրական դաշտ.

2) Հաշմանդամության գնահատման գործընթացում ներդնել հաշմանդամության սոցիալական մոդելի սկզբունքներն ու մոտեցումները, որը հնարավորություն կընձեռի իրականացնել անձի կարիքների բազմակողմանի գնահատում և ըստ այդմ՝ համարժեք ծառայությունների մատուցում.

3) Բարձրացնել հասարակության իրազեկվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների և դրանց կարգավորման արդի մոտեցումների և սկզբունքների վերաբերյալ, նպաստել կարծրատիպերի և խարանի վրա հիմնված վերաբերմունքի փոփոխությանը.

4) Ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում.

5) Բարձրացնել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության մակարդակը, ապահովել հավասար իրավունքներ աշխատանքի տեղավորման, մատչելի աշխատատեղերի ստեղծման, աշխատանքային սոցիալական միջավայրի ձևավորման հարցերում, խթանել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման համար գործատուներին խրախուսման մեխանիզմները.

6) Ապահովել քաղաքաշինական միջավայրի մատչելիությունը միջազգային պահանջներին համապատասխան.

7) Ապահովել մատչելի տրանսպորտ հաշմանդամություն ունեցող անձանց համար.

8) Բարձրացնել հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնման գործընթացի արդյունավետությունը.

9) Ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հավասար հիմունքներով կրթություն ստանալու իրավունքը.

10) Զարգացնել հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող համապատասխան մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործընթացը.

11) Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գործընթացն իրականացնել համակարգված, փոխհամաձայնեցված և փոխհամագործակցության մեխանիզմներով:

## III. Իրավիճակի վերլուծություն

10. Կոնվենցիան ՀՀ կառավարության համար հիմնարար փաստաթուղթ է, որի հենքի վրա պետք է մշակվի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության պետական քաղաքականությունը և օրենսդրությունը՝ այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված ռազմավարությունը, միջնաժամկետ և տարեկան ծրագրերը: Բոլոր գործողությունները պետք է ուղղված լինեն հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը և իրավունքների պաշտպանությանը:

11. Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Չնայած օրենքում պարբերաբար կատարվել են փոփոխություններ և լրացումներ, այնուամենայնիվ, ամրագրված սկզբունքներն ու մոտեցումները դարձել են ժամանակավրեպ և չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման միջազգայնորեն ընդունված և ճանաչված չափանիշներին: Գործող օրենսդրությամբ հաշմանդամություն ունեցող անձ է համարվում այն անձը, ով առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն: Այս մոտեցումը հիմնված է առավելապես հաշմանդամության բժշկական մոդելի վրա, որի դեպքում հաշվի չեն առնվում անձի գործունեության և մասնակցության առանձնահատկությունները, ինչպես նաև արտաքին գործոնները, որոնք կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ դրանց վրա:

12. Կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել հաշմանդամության ոլորտի պետական քաղաքականության սկզբունքներն ու ուղղությունները կառուցել հաշմանդամության սոցիալական մոդելի վրա, ինչը ենթադրում է հաշմանդամության դիտարկումը առողջական խնդիրներ ունեցող անհատի և սոցիալական ու ֆիզիկական միջավայրի փոխազդեցության համատեքստում:

13. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ինստիտուցիոնալացման տեսանկյունից ամենակարևոր խնդիրը նոր՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի նախագիծ) ընդունումն է (ՀՀ օրենքի նախագիծը ս.թ նոյեմբերի 3-ի ՀՀ կառավարության նիստի ընթացքում հավանության է արժանացել և սահմանված կարգով՝ 11.11.2016թ. ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով):

14. Անվերապահորեն ընդունելով, որ հաշմանդամությունը մեկ գերատեսչության խնդիր չէ, հասարակական կյանքի բոլոր ոլորտների (քաղաքաշինություն, տրանսպորտ, մշակույթ, սպորտ, սոցիալական պաշտպանություն, առողջապահություն, տեղեկատվություն և այլն) համար օրենքի նախագծում նախանշված են հաշմանդամություն ունեցող անձանց ներառումն ապահովող նորմեր և պահանջներ:

15. Սակայն միայն իրավական հիմքի ամրագրումը դեռևս բավարար չէ նպատակները լիարժեք իրագործելու համար: Առավել անհրաժեշտ է սահմանել նաև թիրախային ուղղություններն իրականացնելուն ուղղված կոնկրետ միջոցառումներ ու ծրագրեր:

16. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովելու համար ներդաշնակ, համապարփակ, նպատակային, շարունակական և արդյունավետ քաղաքականություն իրականացնելու տեսանկյունից կարևոր նախապայման է համալիր ծրագրի առկայությունը, որտեղ ներառված են բոլոր ոլորտներում իրականացվող իրավական և գործնական բնույթի միջոցառումներ, որոնք բխում են Կոնվենցիայի դրույթներից ու սկզբունքներից:

17. Հայաստանի Հանրապետությունում 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառված է 200 177 հաշմանդամություն ունեցող անձ, որը կազմում է բնակչության 6,7%:

Հաշմանդամություն ունեցող անձանց թվի աճի միտումներ նկատվում են նաև Հայաստանի Հանրապետությունում, ինչն ակներև է ստորև ներկայացվող պատկերում:

**Պատկեր 1**




18. 2016 թվականի հունիսի 30-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված է 202 839 անձ, որի վիճակագրական բաշխվածությունը ներկայացվում է ստորև՝

**Պատկեր 2**




**Պատկեր 3**




19. Գործող օրենսդրության համաձայն հաշմանդամությունը սահմանվում է բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում, որն իրականացվում է բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից: Անձին սահմանվում է հաշմանդամության 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ խումբ կամ «հաշմանդամ երեխա»:

20. Բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի կարևոր բաղկացուցիչ մասն է վերականգնողական անհատական ծրագրի (այսուհետ՝ ՎԱԾ) մշակումը, որի համաձայն իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնումը: Հանրապետությունում սակավաթիվ են վերականգնողական, այդ թվում ցերեկային կենտրոնները, թույլ են վերականգնողական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համագործակցության մեխանիզմները, չկա համապարփակ տեղեկատվություն վերականգնումն իրականացնող կազմակերպությունների գործունեության, տեղակայման և այլ տվյալների մասին: Ներկայումս աշխատանքներ են տարվում սոցիալական ծառայությունների քարտեզագրման և ԱՀԿ ֆունկցիաների միջազգային դասակարգման (այսուհետ՝ ՖՄԴ) վրա հիմնված՝ անձի կարիքների բազմակողմանի գնահատման հիման վրա ՎԱԾ-ի մշակման ուղղությամբ:

21. **Սոցիալական պաշտպանության ոլորտում** ՀՀ օրենսդրությամբ ամրագրված են հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծման ուղղություններ և միջոցներ, սահմանված են որոշակի երաշխիքներ:

22. Հասարակական կյանքում լիարժեք մասնակցություն ապահովելու նպատակով՝ ամենամյա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց անվճար տրամադրվում են պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ (տարեկան 12000-13000 պարագա), այդ թվում՝ վերին և ստորին վերջույթի պրոթեզներ, օրթեզներ, սեղմիրաններ, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ, սայլակներ, լսողական սարքեր և այլն:

23. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման խնդիրը սոցիալական ոլորտի արդի հիմնախնդիրներից է: Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման նպատակով իրականացվում են բազմաթիվ պետական նպատակային ծրագրեր՝ հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական ուսուցման, աշխատանքային ունակությունների վերականգնման և նրանց աշխատանքի տեղավորման, աշխատատեղի հարմարեցման ուղղությամբ:

24. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման նպատակով՝ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով կազմակերպությունների համար, անկախ սեփականության ձևից, սահմանված է աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (այսուհետ՝ քվոտա)՝ հաշմանդամություն ունեցող և տարիքային կենսաթոշակի իրավունք տվող՝ տարիքը չլրացած անձի աշխատանքի տեղավորման համար:

25. Այդուհանդերձ, հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման խնդիրը մնում է ոլորտի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից: Հաշմանդամություն ունեցող անձանց՝ որպես աշխատաշուկայում անմրցունակ անձանց, կայուն զբաղվածությունը խթանելու և աշխատանքային ներուժն առավել արդյունավետ իրացնելու նպատակով՝ անհրաժեշտ է ներդնել նոր մոտեցումներ, ընդլայնել խրախուսման մեխանիզմները: Սակավ աշխատատեղերը, աշխատանքային միջավայրի ոչ մատչելի լինելը, գործատուների և աշխատողների կարծրատիպերը, խտրական վերաբերմունքը, հատուկ տեխնոլոգիաների բացակայությունը լուրջ խոչընդոտ են հարցի լիաժեք կարգավորման համար: Մյուս կողմից, կրթության ոլորտում առկա խնդիրների պատճառով քիչ է համապատասխան մասնագիտացում կամ որակավորում ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց թիվը:

26. Սոցիալական պաշտպանության ոլորտում արմատական բարեփոխում է հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ձևավորումը: Այս համակարգի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձիք, որպես սոցիալապես խոցելի խումբ, հնարավորություն ունեն մեկ վայրում, իրենց կարիքներին համապատասխան ստանալու անհրաժեշտ ծառայություն կամ կազմակերպվի դրանց մատուցումը:

27. **Առողջապահության ոլորտում** հաշմանդամություն ունեցող անձանց պետական բյուջեի միջոցների հաշվին երաշխավորվում է որակյալ անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում:

28. 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձիք և «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձիք իրավունք ունեն ստանալու անվճար դեղեր, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձիք՝ 50 տոկոս զեղչով: Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական վերականգնումը առողջարաններում իրականացնելու համար տրամադրվում են առողջարանային վերականգնողական բուժման ուղեգրեր:

29. Սակայն պետական պատվերի շրջանակներում բուժվելու համար գոյանում են հերթեր, հատկապես լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների համար, իսկ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնությունը և սպասարկումը տրամադրվում է վճարովի հիմունքներով, բացառությամբ ՀՀ

օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, բուժանձնակազմում չկան հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու առանձնահատուկ հմտությունների (այդ թվում՝ հաղորդակցման) տիրապետող մասնագետներ, բժշկական հաստատությունները մեծամասամբ մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և տեղաշարժման համար, եթե կան հարմարեցումներ, ապա դրանք հիմնականում ավարտվում են միայն թեքահարթակների կառուցմամբ, սանհանգույցները նույնպես հարմարեցված չեն: Սահմանափակ է նաև առողջարանային վերականգնողական բուժման համար հատկացվող ուղեգրերի, ինչպես նաև հարմարեցված առողջարանների քանակը:

30. **Կրթության ոլորտում** ևս իրականացվում են օրենսդրական բարեփոխումներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը: Հայաստանի Հանրապետության հանրակրթության ոլորտի մի շարք ուսումնական հաստատություններում ներդրված է ներառական կրթությունը: Համաձայն 2014թ. դեկտեմբերի 1-ին «Հանրակրթության մասին օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի դրույթների, մինչև 2025 թվականը ՀՀ բոլոր հանրակրթական դպրոցներում կներդրվի ներառական կրթության համակարգը, իսկ հատուկ դպրոցները կվերակազմավորվեն մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների:

31. 2015-2016 թթ. ուստարում ներառական կրթություն իրականացնող 203 հանրակրթական դպրոցներում սովորում են 4706 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ: Երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների գնահատման հիմքում դրված են ԱՀԿ ՖՄԴ սկզբունքները:

32. Կրթության ոլորտում շարունակում է առաջնահերթ կարգավորման խնդիր մնալ ուսումնական հաստատությունների ֆիզիկական և բովանդակային մատչելիությունը. ուսումնական հաստատությունները հիմնականում մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման համար, ուսումնական ծրագրերը պետք է մշակվեն հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատուկ կրթական կարիքներին համապատասխան, մանկավարժների գերակշիռ մասը վերապատրաստված չէ, չունեն հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու հմտություններ և գիտելիքներ, ունեն կարծրատիպեր խնդիրներ ունեցող անձանց հանդեպ, հաճախ դրսևորվում է խտրական վերաբերմունք, դրանով հանդերձ, նրանք չեն կարողանում աշակերտների մեջ սերմանել ճիշտ վերաբերմունք այդ անձանց հանդեպ:

33. Հատկապես խնդրահարույց է հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպումը նախադպրոցական կրթական հաստատություններում: Չնայած Երևանի բոլոր մանկապարտեզներում կառուցվել են թեքահարթակներ, այնուամենայնիվ դա բավարար չէ հաշմանդամություն ունեցող երեխաների լիարժեք ներառման համար: Վերոնշյալ խնդիրներին պետք է հավելել նաև ներառական մանկապարտեզների սակավ քանակը: 2011 թվականից մինչ այսօր Երևանում կազմավորվել և գործում է 8 ներառական մանկապարտեզ:

34. **Տրանսպորտի ոլորտում** վերջին տարիներին իրականացվում են օրենսդրական բարեփոխումներ՝ Կոնվենցիայի պահանջներից ելնելով: Մասնավորապես, փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության մրցույթի անցկացման կարգում, որպես մրցութային պայման, ամրագրվել է հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված տրանսպորտային միջոցների նվազագույն քանակի ամրագրումը: Երևանի զարգացման ծրագրերին համապատասխան իրականացվում են միջոցառումներ՝ Երևանը մատչելի դարձնելու ուղղությամբ: Սակայն այս գործընթացը չպետք է սահմանափակվի միայն Երևանով:

35. **Քաղաքաշինության ոլորտում** իրականցվող աշխատանքները ևս ընդգրկում են ինչպես իրավական, այնպես էլ գործնական միջոցառումների շրջանակը: Մասնավորապես, մատչելիութան ապահովման վերաբերյալ դրույթներ են սահմանված «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում, ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N 392-Ն որոշման մեջ: Այնուամենայնիվ, այսօր կառուցվող կամ հիմնանորոգվող շենքերի մեծ մասը, ըստ էության, հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Կարիք կա խստացնելու կամ վերանայելու վերահսկողության մեխանիզմները:

36. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների կարգավորման գործընթացում իր յուրահատուկ և կարևոր դերակատարումն ունի **Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը**: Վերջինիս կազմում ընդգրկված են պետական և ոչ պետական մարմինների ներկայացուցիչներ հավասար մասնակցային հիմունքներով, և օրինակելի է տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների փոխհամաձայնեցված և համակարգված գործունեություն իրականացնելու առումով: Հանձնաժողովի նիստերի ընթացքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացմանն ուղղված հարցեր, որոնք իրենց կարգավորումն են ստանում տարբեր գերատեսչությունների և ոչ պետական կառույցների համատեղ որոշումների և ձեռնարկված քայլերի միջոցով:

37. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի՝ ՀՀ վարչապետի մասնակցությամբ կայացած նիստի արդյունքներից է 2016 թվականը հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հնարավորությունների տարի հռչակելու գաղափարը, որը նոր խթան է հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները լսելի դարձնելու, հաշմանդամություն ունեցող անձանց կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար պայմանների ապահովմանն և նրանց իրավունքների իրացմանն ուղղված միջոցառումների իրականացման ուղղությամբ:

38. Հանրապետությունում հաշմանդամության ոլորտում իրականացվող բարեփոխումների շարքում գերակա խնդիր է հաշմանդամության սահմանման գործընթացի վերանայումը: ՀՀ կառավարության 2014թ. հունվարի 9-ին թիվ 1 արձանագրային որոշման համաձայն նախատեսվում է վերանայել հաշմանդամության

սահմանման չափորոշիչները և ներդնել անձի կարիքների և կարողությունների բազմակողմանի գնահատման վրա հիմնված նոր մոդել:

39. Նոր մոդելի ներդրման ուղղությամբ իրականացվել և շարունակվում են իրականացվել լայնածավալ աշխատանքներ՝ մշակվել են գործիքներ, որոնք հնարավորություն կտան հավաստի տեղեկատվություն ստանալ անձի ֆունկցիոնալության մասին և գնահատել այն ծառայությունների ու աջակցության փաթեթը, որն անհրաժեշտ է անձի լիարժեք կամ առավելագույն ֆունկցիոնալությունն ապահովելու համար:

40. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 19-ի N 1139-Ն հրամանով «Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության դասակարգիչը» հաստատվել է որպես ազգային ստանդարտ և կարող է կիրառվել որպես հաշմանդամության սահմանման, հաշմանդամության ոլորտում քաղաքականության մշակման, հետազոտությունների իրականացման և միջամտությունների պլանավորման միասնական գործիք:

41. Թերևս, հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորություններ և հավասար ու մատչելի պայմաններ ապահովելու կարևորագույն գրավականը միջոլորտային միասնական և համակարգված քաղաքականություն իրականացնելն է, սակայն առավել կարևոր է իրականացվող գործողությունների ենթատեքստում հաշմանդամություն ունեցող անձիք դիտարկվեն ոչ միայն որևէ ծառայություն ստացողներ, այլև լիիրավ պարտավորություններ և լիազորություններ ունեցող քաղաքացիներ:

## IV. Համալիր ծրագրի մշտադիտարկումը և գնահատումը

42. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրի մշտադիտարկումը և գնահատումը իրականացվում է միջգերատեսչական խմբի կողմից:

43. Միջգերատեսչական խումբը ձևավորվում է ՀՀ նախարարությունների, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարարակական և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներից: Միջգերատեսչական խմբի անդամների թիվը չպետք է գերազանցի 10-ը: Միջգերատեսչական խմբի կազմը հաստատվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 4 ամսյա ժամկետում՝ ՀՀ վարչապետի 2008թ. փետրվարի 25-ի N98-Ն որոշմամբ ստեղծված Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ հանձնաժողով): Միջգերատեսչական խումբը երկամսյա ժամկետում մշակում է սույն որոշման N 2 հավելվածով հաստատված միջոցառումների կատարման մշտադիտարկման ձևաչափը:

44. Սույն որոշման N 2 հավելվածով հաստատված միջոցառումների կատարման, ինչպես նաև համալրի ծրագրի V բաժնում նախանշված ակնկալվող ամփոփ արդյունքների ապահովման ընթացքի վերաբերյալ՝ այդ միջոցառումների

պատասխանատու կատարող պետական մարմինները, համաձայն սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) են ներկայացնում տեղեկություններ, որոնք ամփոփվում են նախարարության կողմից և 15-օրյա ժամկետում ուղարկվում միջգերատեսչական խմբին:

45. Համալիր ծրագրի մշտադիտարկումն իրականացվում է՝ սույն որոշման N 2 հավելվածով հաստատված միջոցառումների կատարման և համալրի ծրագրի V բաժնում նախանշված ակնկալվող ամփոփ արդյունքների ապահովման ընթացքի վերաբերյալ տեղեկությունների, ինչպես նաև միջգերատեսչական խմբի կողմից կատարվող ուսումնասիրությունների արդյունքներով:

46. Միջգերատեսչական խումբը, նախորդ տարվա մշտադիտարկման և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կազմում է հաշվետվություն, ինչպես նաև մշակում առաջարկություններ և ներկայացնում հանձնաժողովի՝ յուրաքանչյուր տարվա 2-րդ հերթական նիստի քննարկմանը: Հանձնաժողովը քննարկում է հաշվետվությունը և ներկայացնում իր դիրքորոշումը և/կամ առաջարկություններ միջոցառումների պատասխանատու կատարող պետական մարմիններին:

47. Համալիր ծրագրի գնահատումն իրականացնելու նպատակով՝ համալիր ծրագրի ավարտից հետո միջգերատեսչական խումբը ամփոփում է տարեկան մշտադիտարկման արդյունքները, հանձնաժողովի կողմից տրված առաջարկությունները և կազմում ամփոփ հաշվետվություն: Հանձնաժողովը քննարկում է ամփոփ հաշվետվությունը և իր առաջարկությունների հետ միասին այն տրամադրում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Վերջինս այն համաձայն սույն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի ներկայացնում ՀՀ կառավարություն:

## V. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովող հիմնական ուղղությունները և ակնկալվող ամփոփ արդյունքները

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող ցուցանիշները՝ ըստ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման հիմնական ուղղությունների.

| | Հիմնական ուղղությունները | Թիրախային ցուցանիշներ | Ակնկալվող ցուցանիշ | |
|---|---|---|---|---|
| | | | Ցուցանիշ | Տարի |
| 1. | **Ազգային օրենսդրության համապատասխանեցում ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի պահանջներին** | Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու սոցիալական ներառմանն ուղղված իրավական դաշտի ապահովում (գործող իրավական ակտերում փոփոխություններ կամ նոր իրավական ակտերի ընդունում) | Իրավական դաշտն ապահովված է | 2021թ. |
| | | Բոլոր ոլորտների զարգացման ծրագրերում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովող միջոցառումների մշակում և իրականացում | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումն ապահովող դրույթները ներառված են ռազմավարական ծրագրերում | 2021թ. |
| | | Հաշմանդամության գնահատման սոցիալական մոդելի ներդրմանն ուղղված իրավական հենքի ստեղծում | Հաշմանդամության գնահատման սոցիալական մոդելը ներդրված է | 2021թ. |
| 2. | **Մատչելիություն** | | | |
| 2.1. | **Քաղաքաշինական անարգել միջավայր** | Քաղաքաշինական նորմերի վերանայում (մշակում) և հաստատում՝ միջազգային առաջադեմ պահանջներին համապատասխան | Քաղաքաշինական նորմերը վերանայված են | 2017թ. |
| | | Շենքերի ու շինությունների կառուցում և շահագործում միջազգային առաջադեմ պահանջներին համապատասխան | Շենքերի ու շինությունների կառուցման և շահագործման ժամանակ միջազգային | 2021թ. |

| | **Հիմնական ուղղությունները** | **Թիրախային ցուցանիշներ** | **Ակնկալվող ցուցանիշ** | |
|---|---|---|---|---|
| | | | **Ցուցանիշ** | **Տարի** |
| | | | առաջադեմ պահանջները հաշվի առնված են | |
| | | Հասարակական նշանակության շենքերի ու շինությունների մատչելիության գնահատում և ըստ այդմ, խելամիտ հարմարեցումների իրականացում | Հանրապետությունում գործող հասարակական նշանակության շենքերի ու շինությունների առնվազն 25 % հարմարեցում հաշմանդամություն ունեցող անձանց համար | 2021թ. |
| **2.2.** | **Տրանսպորտի և ճանապարհային երթևեկության մատչելիություն** | Մատչելի տրանսպորտով ապահովում, մասնավորապես՝ միջքաղաքային, ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովում | Հանրապետություն ներկրվող տրանսպորտային միջոցների առնվազն 30% -ը մատչելի է, կանոնավոր ուղևորափոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցների առնվազն 25% -ը վերազինվել են հատուկ սարքավորումներով | 2021թ. |
| | | Մայթերի, կանգառների, ավտոկայանատեղերի, ավտոկայանների, ավտոկայարանների հարմարեցում | Առնվազն 50% -ը հարմարեցված է | 2021թ. |
| | | Հատուկ ձայնային ազդանշանների տեղադրում լուսացույցների վրա | Առնվազն 50% -ը հարմարեցված է | 2021թ. |
| **2.3.** | **Տեղեկատվության մատչելիություն** | Տեղեկատավության և հաղորդակցության տեխնոլոգիաների մատչելիության ստանդարտ կանոնների մշակում և ընդունում | Ստանդարտ կանոնները մշակված և հաստատված են | 2017-2018թթ. |
| | | Տեղեկատավության և հաղորդակցության | Տեղեկատվության և | |

| | Հիմնական ուղղությունները | Թիրախային ցուցանիշներ | Ակնկալվող ցուցանիշ | |
|---|---|---|---|---|
| | | | Ցուցանիշ | Տարի |
| | | տեխնոլոգիաների և համակարգերի նախագծում, մշակում, արտադրություն և շահագործում՝ տեղեկատավության և հաղորդակցության տեխնոլոգիաների մատչելիության հաստատված ստանդարտ կանոնների համապատասխան | հաղորդակցության տեխնոլոգիաներն ու համակարգերը մատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար | |
| | | Հեռուստատեսությամբ եթեր արձակվող հեռուստահաղորդումների մատչելիության ապահովում | Եթեր արձակվող հեռուստահաղորդումների առնվազն 25% -ը ապահովված է սուրդոթարգմանությամբ և/կամ հայերեն լուսագրով | 2021թ. |
| | | Էլեկտրոնային կայք էջերի հասանելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար | ՀՀ պետական բյուջեի միջոցներով շահագործվող կայքէջերի հասանելիություն/մատչելիություն ապահովված է | 2021թ. |
| 3. | **Կրթություն** | Հանրակրթական դպրոցներում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում | Հանրապետության հանրակրթական դպրոցների 90%-ում ներդրված է ներառական կրթության համակարգը | 2021թ. |
| | | Ուսումնական հաստատությունների շենքային պայմանների մատչելիության ապահովում | Հանրապետության ուսումնական հաստատությունների շենքերի ու շինությունները մատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար | 2021թ. |
| | | Կրթական հաստատություններում | Ուսումնական ծրագրերը | 2021թ. |

| | Հիմնական ուղղությունները | Թիրախային ցուցանիշներ | Ակնկալվող ցուցանիշ | |
|---|---|---|---|---|
| | | | Ցուցանիշ | Տարի |
| | | հաշմանդամություն ունեցող անձանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներին համապատասխան ուսումնական ծրագրերի հարմարեցում և իրականացում | մշակված են՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց գնահատված կրթական կարիքները | |
| | | Կրթական հաստատությունների աշխատակիցների վերապատրաստում ներառական կրթության հարցերի վերաբերյալ | Մասնագետները վերապատրաստված են | 2018-2021թթ. |
| | | Մանկապարտեզներում ներառական կրթության ներդրում | Երևան քաղաքի վարչական շրջաններում առնվազն 2-3-ական մանկապարտեզի առկայություն, մարզերի մանկապարտեզներում ներառական կրթության ներդրում | 2020-2021թթ. |
| | | Բոլոր մարզերում առնվազն մեկական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի առկայություն, մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրում | Երեխայի կրթության առանձնահատուկ կարիքի գնահատման մանկավարժահոգեբանական աջակցության 11 կենտրոնների առկայություն | 2021թ. |
| | | Կրթական հաստատություններում համապատասխան մասնագետներով համալրում | Կրթական հաստատությունները համապատասխան մասնագետներով համալրված են | 2021թ. |
| | | Հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական | Բարձրագույն, նախնական և միջին մասնագիտական ուսումնական | 2021թ. |

| | Հիմնական ուղղությունները | Թիրախային ցուցանիշներ | Ակնկալվող ցուցանիշ | |
|---|---|---|---|---|
| | | | Ցուցանիշ | Տարի |
| | | հաստատություններում արտոնյալ պայմաններով կրթության կազմակերպում | հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց ուսուցման մատչելի պայմանների ապահովում | |
| **4.** | **Զբաղվածություն** | Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանում | Աշխատանքային տարիքի հաշմանդամություն ունեցող անձանց 15% զբաղվածություն (ելակետային ցուցանիշը 9%) | 2021թ |
| | | Քվոտայի ներդրման գործընթացի արդյունավետության բարձրացում | Քվոտայի արդյունքները վերլուծված են, տրված են համապատասխան առաջարկություններ | 2018-2021թթ. |
| | | Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանն ուղղված նոր մոտեցումների ներդրում | Աշխատատեղերի մատչելիության ապահովում | 2021թ. |
| **5.** | **Մասնակցություն մարզական և մշակութային կյանքին, ժամանց հանգիստ և զբոսաշրջություն** | Շահագործված մշակութային (թանգարաններ, գրադարաններ, թատրոններ, կինոթատրոններ, պատմամշակութային հուշարձաններ և այլ) և մարզական նշանակություն ունեցող (մարզադպրոցների, մարզադահլիճների, մարզասրահների, բակային խաղահրապարակների և այլ) շենքերի և շինությունների հարմարեցում հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպես նաև համապատասխան գույքով ապահովում | Հանրապետության մշակութային և մարզական նշանակություն ունեցող շենքերը և շինությունները հարմարեցված են | 2017-2021թթ. |
| | | Հյուրանոցների, առողջարանների, հանգստյան տների հարմարեցում հաշմանդամություն ունեցող | Հյուրանոցները, առողջարանները, հանգստյան | 2018-2021թթ. |

| | Հիմնական ուղղությունները | Թիրախային ցուցանիշներ | Ակնկալվող ցուցանիշ | |
|---|---|---|---|---|
| | | | Ցուցանիշ | Տարի |
| | | անձանց համար | տները հարմարեցված են | |
| | | Մշակութային նշանակության շենքերում և շինություններում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափով տեղեկատվության և ծառայությունների տրամադրման ապահովում | Հանրապետության մշակութային նշանակություն ունեցող շենքերում և շինություններում տրամադրվող տեղեկատվությունը մատչելի է | 2021թ. |
| | | Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանում մշակութային, մարզական-մասսայական ծրագրերում | Ապահովված է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը մշակութային, սպորտային ծրագրերում | 2017-2021թթ. |
| | | Բոլոր մակարդակներում անցկացվող մարզական միջոցառումներին՝ պարալիմպիկ, սուրդլիմպիկ, մտավոր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար «Հատուկ օլիմպիադաների» խաղերին, աշխարհի ու Եվրոպայի առաջնություններին և այլ միջազգային մրցաշարերին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության ապահովում | Յուրաքանչյուր միջոցառմանը առնվազն 1-ական հաշմանդամություն ունեցող անձի մասնակցության ապահովում | 2017-2021թթ. |
| | | Հաշմանդամային սպորտի բնագավառում համապատասխան մասնագետների (մարզիչների) վերապատրաստում | Մասնագետները վերապատրաստված են | 2021թ. |
| **6.** | **Առողջություն, բուժում և վերականգնում** | Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնությանն և սպասարկմանը, ինչպես նաև վերականգնմանն ուղղված ծրագրերի իրականացում | Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման ապահովում | 2017-2021թթ. |
| | | Հաշմանդամություն ունեցող անձանց անվճար կամ | Անվճար կամ արտոնյալ | 2020- |

| | Հիմնական ուղղությունները | Թիրախային ցուցանիշներ | Ակնկալվող ցուցանիշ | |
|---|---|---|---|---|
| | | | Ցուցանիշ | Տարի |
| | | արտոնյալ պայմաններով դեղերով ապահովում | պայմաններով դեղերը պատշաճ ձևով տրամադրվում են | 2021թթ. |
| | | Բժշկական հաստատությունների շենքային պայմանների մատչելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար | Հանրապետության բժշկական հաստատությունների շենքերը ու շինությունները հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց համար | 2021թ, |
| | | Բուժանձնակազմի վերապատրաստում հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու հմտություններ ապահովելու համար | Բուժանձնակազմը վերապատրաստված է | 2021թ. |
| **7.** | **Մասնակցությունը քաղաքական ու հասարակական կյանքում** | Հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով լիարժեք մասնակցության ապահովում՝ ընտրելու և ընտրվելու գործընթացում, ընտրատեղամասերի տեղակայման շենքերի մատչելիության ապահովում, հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրության գործընթացի հետ առնչվող նյութերի՝ մատչելի ձևաչափով ապահովում | Ընտրատեղամասերի տեղակայման շենքերը, հարմարեցված են, հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրության գործընթացի հետ առնչվող նյութերը մատչելի են | 2017-2021թթ. |
| **8.** | **Իրազեկվածության բարձրացում** | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ուղղված ծրագրերի, միջոցառումների, ծառայությունների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների և իրականացվող բարեփոխումների մասին տեղեկատվության պարբերաբար հրապարակումներ, | Հասարակությունը իրազեկված է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներին և իրականացվող բարեփոխումներին, նրանց ներառմանն ուղղված ծրագրերին, միջոցառումներին, | 2017-2021թթ. |

| | Հիմնական ուղղությունները | Թիրախային ցուցանիշներ | Ակնկալվող ցուցանիշ | |
|---|---|---|---|---|
| | | | Ցուցանիշ | Տարի |
| | | տեղեկատվական նյութերի տպագրություն, դասընթացների, վերապատրաստումների, համաժողովների կազմակերպում | ծառայություններին | |
| 9. | **Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանություն** | Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկվածության բարձրացում | Հաշմանդամություն ունեցող անձիք տեղեկացված են արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերի մասին | |
| | | Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանվածության ապահովման պլանավորում | | |
| 10. | **Վիճակագրություն և տվյալների հավաքագրում** | Բոլոր գերատեսչությունների կողմից հավաքագրվող տեղեկատվական շտեմարաններում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվության առանձնացում | Տեղեկատվական շտեմարաններում ներառված է հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվություն | 2018-2021թթ. |
| | | Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվության համակարգված հավաքագրում միասնական ձևաչափով, տեղեկատվության ինքնաշխատ փոխանակության հնարավորության ապահովում: | Միասնական շտեմարանների ձևավորում | 2019-2021թթ. |

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թ.
հունվարի 12-ի նիստի N 1
արձանագրային որոշման

**ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ**

| | **Միջոցառում** (գործողություններ) | **Կատարման ժամկետները** (փուլերով) | **Պատասխանատու կատարողը և համակատարողները** | **Ֆինանսավորման աղբյուրը** | **Ակնկալվող արդյունքը** |
|---|---|---|---|---|---|
| **1.** | **Ազգային օրենսդրության համապատասխանեցում ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Կոնվենցիայի պահանջներին** | | | | |
